Արձանագրություն N 4
ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 հուլիսի 2017թ
ժամը 11:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Գևորգյանը
անդամ՝ Մ. Ստեփանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր՝ հանձնաժողովի անդամ՝ Մ. Խաչատրյանը

Օրակարգ

1. Հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին
2. Ընթացակարգի հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Ա. Գևորգյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ -ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց.

ա/ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին, 6-րդ, 19-րդ, 21-22-րդ, 24-րդ, 25-րդ, 27-28-րդ, 34-րդ, 37-րդ չափաբաժինների համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա. Գևորգյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

բ/ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքվելուն հաջորդող օրացուցային օրվա ժամը 16:45-ին, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 24, 1-ին մասնաշենք, N25 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ա. Գևորգյան

անդամ՝ _____ Մ. Ստեփանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան